ԱՍԿՅԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Ինչպես հաղթել շախմատում

Bookmark

Тигран Петросян

ШАХМАТНЫЕ ЛЕКЦИИ

Bookmark

Տիգրան Պետրոսյան

ԱԼԽԵՅԻ ԽԱՂԸ

Ինչպես հաղթել շախմատում

Թարգմանությունը ռուսերենից՝
Արմեն Ամիրխանյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2019

Bookmark

ՀՏԴ 794.1
ԳՄԴ 75.581
Պ 505

Պետրոսյան Տիգրան
Պ 505 Գահերի խաղը. ինչպես հաղթել շախմատում/ Տիգրան Պետրոսյան.- Եր.: Newmag, 2019.- 384 էջ:

Այս գրքի վրա Տիգրան Պետրոսյանը սկսել է աշխատել 1980-ականների սկզբին, բայց այդպես էլ չի ավարտել այն: Նրա մահից հետո ամփոփ տեսքի է բերել շախմատիստի այրին՝ Ռոնա Պետրոսյանը:

Գիրքը կազմելիս օգտագործվել են Պետրոսյանի դասախոսությունները, որոնք նվիրված են շախմատային ռազմավարական նրբություններին, ռեպորտաժներ, հեռուստատեսային և ռադիոձայնագրություններ, շաբաթաթերթերում հրատարակված հոդվածներ: Նրա կնոջ՝ Ռոնա Պետրոսյանի ջանքով հաջողվել է գտնել Պետրոսյանի դասախոսությունների ձայնագրությունները, որոնք համարվում են անվանի շախմատիստի ուսուցողական լավագույն նյութերը:

Տիգրան Պետրոսյանն ունեցել է պաշտպանողական խաղաոճ, ինչի շնորհիվ ստացել է «Երկաթե Տիգրան» պատվանունը: Հազվադեպ էր հարձակվում և ավելի շատ ջանք էր գործադրում հակառակորդի հարձակումները կանխելու, քան իր հարձակումները կազմակերպելու համար: Համբերատարությունն ու լավ պաշտպանվելու վարպետությունը նրան դարձրել էին դժվար պարտվող շախմատիստ:

Գրքում հավաքված են աշխարհի չեմպիոնի կարևոր հոդվածները, պարտիաների մեկնաբանությունները, քայլերի համակարգումը, դասախոսությունները: Լեգենդար շախմատիստի 14 դասերն ընդգրկում են շախմատային պարտիայի բոլոր փուլերը՝ գիրքը դարձնելով ինքնակատարելագործման հիանալի ձեռնարկ:

Գրքի համար հատուկ նախաբան է գրել շախմատի աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովը:

ՀՏԴ 794.1
ԳՄԴ 75.581

Գիրքը հրատարակվել է Հայաստանի շախմատի ֆեդերացիայի օժանդակությամբ (Ֆեդերացիայի նախագահ՝ ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյան):

ISBN 978-9939-9196-8-3
Տիգրան Պետրոսյան. «Գահերի խաղը. ինչպես հաղթել շախմատում» © 2019, «Նյու Մեգ» ՍՊԸ
Тигран Петросян. «Шахматные лекции» © 1989, Тигран Петросян
Հեղինակի լուսանկարը՝ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի արխիվից:

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «ԱՐԻ» գրական գործակալության միջոցով

Բովանդակություն

	Պետրոսյանի շախմատային աշխարհը	7
	Կազմողի կողմից	17
Գլուխ 1	Մտորումներ ճանապարհի կեսին	21
Գլուխ 2	Անցյալից	31
Գլուխ 3	Վստահիր, բայց ստուգիր	45
Գլուխ 4	Տեղեկություն և օբյեկտիվություն	57
Գլուխ 5	Գնահատականները փոխվում են	69
Գլուխ 6	Սկզբնախաղ սեփական ճաշակով կամ ինչու եմ սիրում Փ3 քայլը	89
Գլուխ 7	Միշտ արդիական գաղափարներ	131
Գլուխ 8	Վարպետը «կանչվել է գրատախտակի մոտ»	163
Գլուխ 9	Վերլուծության ժամանակ և խաղատախտակի առաջ	171
Գլուխ 10	Դժվար խաղընկերոջ խնդիրը	187
Գլուխ 11	Որակի դիրքային զոհաբերություն	219
Գլուխ 12	Պետրոսյանի տարբերակը	251
Գլուխ 13	Թարմ գաղափարի հմայքը	289
Գլուխ 14	Խաղի տեխնիկան	311
Գլուխ 15	Սովորել և սովորեցնել	323
Գլուխ 16	Ինչ է թողել մեզ անցած տարին	339

Bookmark

Պետրոսյանի շախմատային աշխարհը

Մեծ շախմատիստի, առավել ևս աշխարհի չեմպիոնի ստեղծագործությունը միշտ արդիական է: Այն միշտ էլ շախմատի պատմության մի նոր էջ է, քանի որ բոլոր չեմպիոններն այս կամ այն փուլում շախմատ են բերում ինչ-որ նոր բան, հարթում են իրենց ճանապարհը դեպի շախմատային բարձունքներ: Եվ թերթելով այն մենք, հիմնվելով դասական շախմատի մեր գիտելիքների վրա, բավական անսխալ կարող ենք մատնանշել, թե երբ, որտեղ և, որ գլխավորն է, ով է առաջ քաշել այս կամ այն արդյունավետ գաղափարը, կանխորոշել շախմատի զարգացման այս կամ այն ուղղությունը, և ինչ է դա տվել շախմատին:

Տիգրան Վարդանի Պետրոսյանի ստեղծագործությունը դեռևս ցանկալի չափով մանրակրկիտ և բազմակողմանի չի ուսումնասիրվել: Շատ կարճ ժամանակ է անցել նրա անժամանակ վախճանից: Կյանքից հեռացավ մի շախմատիստ, որն աշխարհին դեռ շատ ու շատ բան կարող էր տալ՝ մատուցելով առաջին հայացքից տարրական ճշմարտություններ,

ովքեր երբեք չեն խաղա Պետրոսյանի հետ, երբեք չեն լսի այս կամ այն գաղափարի իմաստի ու նշանակության շուրջ նրա դատողությունները, մրցաշարերի մասին նրա հետաքրքիր պատմությունները:

Ես կրկին պնդում եմ, որ մեծ շախմատիստների ստեղծագործությունը մշտապես է արդիական, քանի որ այն ժամանակակից է: Այս գրքում, հնարավոր է, ինչ-որ դրույթներ հնացել են, քանի որ սկզբնախաղային գաղափարները սովորաբար հնանում են, բայց ընդհանուր իմաստը, դասախոսությունների ու հոդվածների ընդհանուր բովանդակությունը, անկասկած, օգտակար է բոլոր նրանց համար, ովքեր իսկապես ցանկանում են ուսումնասիրել շախմատ: Գրքից կիմանաք, թե ինչպես էր Պետրոսյանը պարապմունքներ անցկացնում երիտասարդ շախմատիստների հետ, ինչ էր բացատրում, ինչի վրա էր խորհուրդ տալիս ուշադրություն դարձնել ինքնուրույն աշխատանքի ժամանակ:

Այս գիրքը հատկապես օգտակար է շախմատ դասավանդողների համար, քանի որ, իմ կարծիքով (ես դա կարող եմ վկայել Միխայիլ Բոտվիննիկի[1] հետ երկարատև շփումների իմ փորձով)՝ շախմատիստի դաստիարակության համար չկա ավելի արժեքավոր բան, քան մեծ վարպետի պարզ և անպաճույճ խոսքը շախմատային դիրքի այս կամ այն առանձնահատկության մասին: Տիգրան Պետրոսյանը դա փայլուն էր անում:

---

[1] Mikhail Botvinnik – Միխայիլ Բոտվիննիկ (1911-1995), ռուս շախմատիստ, գրոսմայստեր: Տեխնիկական գիտությունների դոկտոր է, պրոֆեսոր: ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի 6-րդ չեմպիոն և 1-ին չեմպիոնը ԽՍՀՄ-ից (1948-1957, 1958-1960, 1961-1963): ԽՍՀՄ գրոսմայստեր է (1935), ԽՍՀՄ վաստակավոր վարպետ (1945), միջազգային գրոսմայստեր (1950), շախմատային կոմպոզիցիայի մրցավար (1956), ԽՍՀՄ վեցակի չեմպիոն:

դարձություն դարձավ: Առաջին երկուսում ես պարտվեցի, հաջորդներում հաղթեցի: Կարող եմ ասել, որ եթե չլինեին առաջին երկու պարտությունները, ես ոչ միայն մյուսներում չէի հաղթի, այլև, թերևս, չէի կարողանա հասնել իմ հետագա հաջողություններին: Լուծումների ոչ միօրինակությունը, վարպետությունը, որով Պետրոսյանը պաշտպանություն էր վարում և գտնում էր միանգամայն պարադոքսային հնարավորություններ, ինձ ստիպեցին նորովի գնահատել շախմատային խաղատախտակի վրա տեղի ունեցող իրադարձությունները: Այդ երկու պարտիաները մենք խաղացել ենք 1981-ին, երբ ես արդեն ուժեղ գրոսմայստեր էի, սակայն, այդուհանդերձ, հետխաղյա վերլուծություններում պարզեցի, որ Պետրոսյանի գնահատականը շատ ավելի խորն էր իմից: Մի պարտիայի հարցում երկար քննարկումներից հետո, որոնք մինչև օրս հանդիպում են շախմատային հանդեսների էջերին (այդպես մենք Յան Թիմանի[1] հետ հոլանդական New in chess ամսագրում մինչև հիմա վիճում ենք 1981-ին Մոսկվայի միջազգային մրցաշարի պարտիայի շուրջ), ես կարողացա ինչ-որ բան ապացուցել: Մինչդեռ երկրորդում Պետրոսյանի գնահատականը, նրա՝ արքայով համարձակ կենտրոն դուրս գալը (ինչն ապշեցրեց բոլորին և առաջին հերթին ինձ) այնպիսի խոր հիմնավորում ուներ, որ հիմա էլ ոչ-ոքիից ավելի ոչինչ չեմ գտնում սպիտակների համար: Այդպիսի պարտիաները շատ ու շատ բան են սովորեցնում: Իհարկե, գործնական փորձն անգին է և կարելի է միայն ցավակցել բոլոր նրանց,

[1] Jan Timman – Յան Թիման (ծնվ. 1951 թ.), Նիդեռլանդցի շախմատիստ, գրոսմայստեր (1974): Նիդեռլանդների 9-ակի չեմպիոն է, Արևմուտքի ուժեղագույն շախմատիստներից մեկը 1980-ականներին: 1984-ից New In Chess ամսագրի գլխավոր խմբագիրն է:

համադրության մեջ էր: Նրա տեսական բազան կապված էր սեփական պրակտիկայի հետ: Նա նրբորեն ու լավ էր հասկանում, թե տվյալ պահին ինչ միջոցներով է հնարավոր հասնել առաջադրված նպատակին և ինչ լրացուցիչ ռեսուրսներ է պետք օգտագործել առաջադրանքն ամբողջությամբ կատարելու համար:

Շախմատային կարիերայի ընթացքում իմ բախտը բերել է. դեպի մեծ շախմատ իմ ուղին ես սկսել եմ Պետրոսյանի հայացքի ներքո: 1979 թվականին հարավսլավական Բանյա Լուկայում կայացած իմ առաջին միջազգային մրցաշարին[1] մեկնեցինք միասին: Բնականաբար, մրցաշարերում շախմատիստները հաճախ շփվում են, վերլուծում, քննարկում խաղացած պարտիաները: Այս, ի դեպ, ոչ միշտ շախմատային զրույցներում ես շատ բան եմ քաղել Պետրոսյանի մեծարժեք փորձից, ինչը հետագայում պետք եկավ ամենաբարձր մակարդակում պայքարի ընթացքում: Շախմատի հետ կապված ամեն ինչին Պետրոսյանի խորը փիլիսոփայական մոտեցումն ինձ օգնեց մշակել կենսական ակտիվ դիրքորոշում, հաղթահարել ամենալարված վիճակները և ոչ միայն շախմատի տախտակի առջև:

Պետրոսյանի հետ ես հասցրեցի խաղալ հինգ պարտիա: Այնպես ստացվեց, որ բոլորում խաղացի սպիտակներով, բացի առաջինից, որն ավարտվեց բավական արագ, բայց բովանդակալից ոչ-ոքիով: Մենք խաղացինք ևս չորս արդյունավետ պարտիա, և յուրաքանչյուրն իմ կյանքում մեծ իրա-

[1] 1979 թվականին Բանյա Լուկայում կայացած խոշոր միջազգային մրցաշար, որին մասնակցել են 14 գրոսմայստերներ և 2 վարպետներ: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

ինչ-որ տարբերակներ բերել օրիգինալ մտահղացման գեղեցկությունը կամ թարմությունն ակնառու կերպով ցույց տալու համար, Պետրոսյանը գտնում է պարզ և հակիրճ լուծում: Տարբերակներ նույնպես կան, բայց դրանք չեն ծանրաբեռնում գիրքը. դրանք ճիշտ այնքան են, որքան պետք է լինեն և բնականորեն հյուսված են հեղինակի դատողությունների հենքում: Նա քայլ առ քայլ մեզ մոտեցնում է շախմատում իր հիմնական հայեցակետի ըմբռնմանը:

Տիգրան Պետրոսյանի անվան հետ են կապվում սկզբնախաղային ոչ քիչ թվով նոր համակարգեր, ընդ որում, հենց համակարգեր և ոչ թե սկզբնախաղային նորույթներ: Եվ այս առումով գիրքը, հատկապես «Վստահիր, բայց ստուգիր», «Տեղեկություն և օբյեկտիվություն», «Գնահատականները փոխվում են», «Սկզբնախաղ սեփական ճաշակով կամ ինչու եմ սիրում Փ՝5 քայլը» հոդվածները, շախմատիստին սովորեցնում են ավելի ստեղծագործաբար մոտենալ այս խաղին, ինչն առանձնապես կարևոր է շախմատային տեղեկություններով հագեցած մեր ժամանակներում, երբ դժվար է ճիշտ ուղեցույց գտնել տեսական նորույթների, սկզբնախաղային գաղափարների ծովում, որոնք բազմանում են տաք անձրևից հետո աճող սնկերի նման: Եվ սկզբնախաղային խնդիրների Պետրոսյանի մեկնաբանությունը կարգ ունեցող շախմատիստին օգնում է իր ուղին գտնել սկզբնախաղային ռազմավարության անծայր հեղեղում, ընտրել իր գլխավոր գիծը, որով կարելի է առաջ գնալ և հասնել լավագույն գործնական արդյունքների:

Տիգրան Պետրոսյանի ստեղծագործության ներդաշնակությունը գործնական ու տեսական սկզբունքների նուրբ

ը գիտի կամ գոնե լսել է Պետրոսյանի «ֆիրմային» գաղափարների մասին, որոնցից են որակի դիրքային զոհաբերությունը, զինվորի դիմաց որակի զոհաբերությունը, վիրտուոզ պաշտպանություն վարելու կարողությունը, սպառնացող վտանգներն ավելի ճշգրիտ կանխարգելելը, դիրքային այնպիսի աննկատ նրբություններն օգտագործելը, որոնք, թվում է, էական դեր չեն խաղում, սակայն որոշ ժամանակ անց դրսևորվում են վճռորոշ կերպով: Հենց այստեղ, հենց շախմատային ռազմավարության այնպիսի թվացյալ անհամադրելի բաղադրիչների, ինչպիսիք են որակի դիրքային զոհաբերությունն ու դիրքային նվազագույն առավելությունների օգտագործումը, ներդաշնակության մեջ է, հավանաբար, հսկայական գործնական ուժի, շախմատային դիրքերի խորքերը թափանցելու այն գաղտնիքը, որին տիրապետում էր Տիգրան Պետրոսյանը: Քանի որ նույնիսկ այդ բևեռացված հնարքների մեջ է թաքնված մեն-միակ իմաստը. շախմատը բացառիկ ներդաշնակ է իր բնույթով, և կարևոր չէ՝ ինչ ենք անում, զոհաբերությա՞ն ենք դիմում, հակառակորդի դիրքում թուլությո՞ւն ենք ստեղծում, թե՞ ազատվում ենք մեր ճամբարում թուլությունից: Այս ամենի նպատակը սեփական դիրքում ներդաշնակության հասնելն է և, համապատասխանաբար, հակառակորդի շարքերում քաոս առաջացնելը: Դիրքային ներդաշնակության հենց այս զգացումն է Պետրոսյանը փոխանցել իր շատ հանգամանալից մեկնաբանություններում: Նրա ծանոթագրությունները ծանրաբեռնված չեն տարբերակների առատությամբ, սակայն առավելագույնս հագեցած են գաղափարներով և դրանց ուսանելի բացատրություններով: Եվ այնտեղ, որտեղ ես, հավանաբար, կգերադասեի

դատախտակի վրա շախմատային պարտիայի ընթացքում: Պետրոսյանը տիրապետում էր խաղատախտակի վրա ներդաշնակ, կենսալից դիրքեր ստեղծելու արվեստին, դիրքեր, որոնց արտաքին դինամիկայի բացակայությունը, թերևս, փոխհատուցվում էր հսկայական ներքին էներգիայով, որտեղ աննշան փոփոխությունն անմիջապես անդրադառնում էր ընդհանուր, հակառակորդի համար ոչ միշտ հասկանալի ռազմավարության վրա: Միաժամանակ նա կարողանում էր հասկանալի բացատրել, թե ինչպես է արել դա:

Ընթերցելով ձեռագիրը ես առաջին հերթին ուշադրություն էի դարձնում այն բանի վրա, ինչին հատուկ ուշադրություն էր հատկացնում ինքը՝ Պետրոսյանը, և ինձ համար արժեքավոր բաներ գտա, թեև դրանց պետք է որ հանգեի շատ ավելի վաղ: Սակայն, ըստ երևույթին, շախմատի մշտական թարմությունն ու հմայքը ներկայանում են նաև նրանով, որ խաղացողը շախմատում ամեն անգամ բախվում է անիմանալիին, եթե անգամ ներըմբռնմամբ արդեն լուծել է նման խնդիրներ գործնականում: Հավանաբար, բանն այն է, որ պայծառացումը, ինքդ քեզ համար «ի՞նչ է սա»-ի հստակ ձևակերպումը կարող են գալ միանգամայն անսպասելի: Ահա թե ինչու, ընթերցելով Տիգրան Պետրոսյանի դասախոսությունները, թափանցելով նրա մտքերի ընթացքի մեջ, շախմատիստներն ամեն անգամ իրենց համար նորանոր փոքր բացահայտումներ կանեն:

Իհարկե, փոքրիկ նախաբանում դժվար է մանրամասն պատմել աշխարհի 9-րդ չեմպիոնի հայացքների, շախմատային հավատամքի, նոր գաղափարների մասին, որոնք շախմատ է բերել Պետրոսյանը: Հավանաբար, յուրաքանչյու-

բայց որոնք, ըստ էության, շախմատային ստեղծագործության հիմքն են: Եվ շարադրանքի այն պարզությունը, որ տեսնելու ենք այս գրքում, առաջին հերթին վկայում է շախմատին Տիգրան Պետրոսյանի մոտեցման խորության մասին. այդ խորությունը նրա մտածողության հստակության, ոչ միայն շախմատային խոշորագույն խնդիրների, այլև խաղի տակտիկայի ու ռազմավարության բոլոր նրբությունների բացառիկ ընկալման արդյունքն է:

Քչերն են շախմատի զարգացման գործում նշանակալի ներդրում ունեցել, բայց էլ ավելի փոքր է այն մեծ շախմատիստների թիվը, որոնք կարողացել են սերունդներին փոխանցել իրենց բացահայտած շախմատային գաղտնիքները: Այս ուղղությամբ Պետրոսյանը շատ բան է արել: Եվ չնայած նրա գրածի ծավալն այնքան էլ մեծ չէ, բայց այս էջերին շարադրված են շախմատի հիմքերն ու էությունը: Այս գիրքը, իհարկե, ավանդական դասագիրք չէ և ոչ էլ ձեռնարկ, որը կարող է սովորեցնել շախմատ խաղալ կամ բարձրացնել խաղացողի որակավորումը: Այն ունի մեկ այլ, շատ ավելի կարևոր առաքելություն. սովորեցնում է մտածել, ավելի ստույգ՝ սովորեցնում է, թե ինչպես **պետք է** մտածել (*ընդգծումը՝ խմբ.*), քանի որ շախմատային մտածողությունն ինքնին ոչ միշտ է արդյունավետ: Ուստի, կարդալով Պետրոսյանի դասախոսություններն ու հոդվածները և ընկալելով նրա մտքերը շախմատային ամենատարբեր խնդիրների մասին, ընթերցողը կկարողանա հասկանալ, թե ինչու է այս շախմատիստն ընտրել այս կամ այն շարունակությունը, ինչպես, երբեմն անորսալի ինչ օրենքների հիման վրա է արվել այս կամ այն քայլը, թաքուն ինչ դինամիկ ուժեր են փոխազդում խա-

Նույնիսկ հավատս չի գալիս, որ այս գիրքը Տիգրան Պետրոսյանի յուրօրինակ շախմատային կտակն է: Դեռ շատ թարմ են նրա հետ հանդիպումների ու զրույցների հիշողությունները: Բայց կարևոր է, որ այս գործում առաջին քայլն արդեն արվել է, որովհետև խոշոր շախմատիստի համար չկա ավելի կարևոր ու ավելի ազնիվ նպատակ, քան սեփական փորձն իրենից հետո եկողներին փոխանցելը: Չէ՞ որ շախմատում (ինչպես, թերևս, մարդկային գործունեության բոլոր ոլորտներում) գլխավորը կուտակվածը պահպանելը, բազմապատկելն ու փոխանցելն է նրանց, ովքեր հետո են գալու: Կարծում եմ, եթե Տիգրան Պետրոսյանը մեզ հետ լիներ, դա անպայման ինքը կաներ: Նա չկա, բայց մնացել է նրա արվեստը, և մեզնից է կախված այն պահպանելը նրանց համար, ովքեր շախմատով հիմա են զբաղվում և կնվիրվեն շախմատին ապագայում, քանի որ Պետրոսյանի արվեստում արժեքավոր շատ բան կա, որը երիտասարդությանը կօգնի բացահայտել շախմատային բարձրագույն վարպետության գաղտնիքները:

Գարի Կասպարով[1]
Մոսկվա, 1989 թվական

[1] Garry Kasparov – Գարի Կասպարով (ծնվ. 1963 թ.), հայ-հրեական ծագումով շախմատիստ, գրոսմայստեր: Միջազգային գրոսմայստեր է (1980), ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1985), ԽՍՀՄ չեմպիոն (1981, 1988), Ռուսաստանի չեմպիոն (2004), Շախմատի համաշխարհային օլիմպիադայի ութակի հաղթող: 2005 թ. Կասպարովը հայտարարել է կարիերան ավարտելու մասին, որպեսզի իրեն նվիրի քաղաքական գործունեությանը: Նա ՌԴ-ում գործող քաղաքական վարչակազմի ընդդիմադիր ղեկավարներից մեկն է, Վլադիմիր Պուտինի հասցեին պարբերաբար հանդես է գալիս կոշտ քննադատությամբ: